

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ, ԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ

«ՅՅԵԹՅԵՆ» (ՆԱԺՆՐՈՅՈՒՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 1 - 2 (16600) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 1 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՐԻ




«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայրուրյանին.

Բատոնո Վան, Ձեզ, Ձեր գլխավորած «Վրաստան» թերթի աշխատակիցներին եւ ընթերցողներին շնորհավորում եմ Նոր տարվա եւ Սուրբ Ծննդի առթիվ:

Վստահ քայլերով իր հարյուրամյա հոբելյանին մոտեցող «Վրաստանը» նշանակալի ավանդ է ներդրել հասարակական-քաղաքական կյանքում Վրաստանի հայալեզու բնակչության ինտեգրման, ներգրավվածության մակարդակի բարձրացման գործում:

Այսօր, շնորհավորելով ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ, մաղթում եմ հաջողություններ ու երջանկություն ձեզ եւ ձեր ընտանիքներին:

ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ Վրաստանի նախագահ

«Վրաստան» թերթի խմբագիր պարոն Վան Բայրուրյանին.

Շնորհավորում եմ Ձեզ, թերթի կոլեկտիվին ու ընթերցողներին Նոր տարվա առթիվ: 2018 թվականը բացառիկ է Վրաստանի համար, քանի որ մենք նշելու ենք ժողովրդավարական հանրապետության հռչակման 100-ամյակը:

Շնորհավորում եմ Վրաստանի համար այդ նշանակալից տարեդարձը եւ բոլորիս համար նոր հնարավորությունների Նոր տարին: Մաղթում եմ ապրել այնպիսի երկրում, որտեղ հնարավոր է իրականացնել ձեր բոլոր գաղափարները, որտեղ պահպանում ենք եղածը եւ սեփական ձեռքերով ստեղծում նորը, որտեղ բոլորը կատարում են իրենց սիրած գործը եւ կարող են իրենց գիտելիքներով ու փորձով ծառայել երկրին:

Բարեկեցություն եւ երջանկություն եմ մաղթում ձեզ եւ ձեր ընտանիքներին: Շնորհավոր՝ Նոր տարի:



ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ Վրաստանի վարչապետ

«Վրաստան» թերթի աշխատակազմին.

Թանկագին բարեկամներ, շնորհավորում եմ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Վրացական տեղեկատվական հարթությունում իր ուրույն տեղն զբաղեցնող «Վրաստանի» կոլեկտիվին մաղթում եմ ամենայն բարիք, հաջողություններ, բարեկեցություն ձեզ եւ ձեր ընտանիքներին:

Սիրելի՛ բարեկամներ.

Իմ ամանորյա ջերմ մաղթանքներն են հղում իմ սիրելի ախալքալաքցիներին ու նինոծմինդացիներին:

Համոզված եմ, որ 2018-ին կշարունակենք համատեղ մեր գործունեությունը՝ ի բարօրություն մեր հարազատ երկրամասի, նրա աշխատասեր ու ջանադիր բնակչությանը:



ՀԵՆՋԵԼ ՄԿՈՅԱԼ Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր

ՆՈՐ ԱՉՂԱԿ՝ ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԸ ՎՐԱՍՏԱՆ

Դեկտեմբերի 25-26-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի հետ, երկօրյա պաշտոնական այցով, գտնվում էր Թբիլիսիում:

Հայաստանի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը, պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Սարտիրոսյանը, էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկյանը, պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանը, Ազգային ժողովի պատգամավոր Աշոտ Արսենյանը:

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ԱՌԿԱ ՆԵՐՈՒԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի նախագահի նստավայրում, Հայաստանի նախագահի դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, անցկացվեց երկու երկրների նախագահներ Գիորգի Սարգվելաշվիլու եւ Սերժ Սարգսյանի առանձնազրույցը, որին հաջորդեց երկու երկրների պատվիրակությունների մասնակցությամբ ընդլայնված կազմով վրաց-հայկական բարձր մակարդակի բանակցությունները:



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)



«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱԿՈՐ ԽՄԲԱԳԻ ՊԱՐՈՆ ՎԱՆ ԲԱՅՐՈՒՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Բայրուրյան, Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ եւ մաղթում, որ 2018 թվականը լինի կայունության, միասնության եւ նորանոր նվաճումների տարի: Բոլորիս միավորում է խաղաղ եւ ապահով ապագա ունենալու մեր պատկերացումների իրականացման նկատմամբ հավատը:

2018 թվականը հայ ժողովրդի համար պատմական հիշողության զարթոնքի տարի է՝ լեցուն բուռն իրադարձություններով: Հայաստանի Հանրապետության եւ Մայիսյան հերոսամարտերի՝ 100, ինչպես նաեւ քաղաքամայր Երեւանի 2800 ամյակների համազգային նշումով տարին կարող է վերածվել ազգային վերազարթոնքի խորհրդանիշի:

Թող 2018 թվականին է՛լ ավելի խորանա ու ամրանա (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Սիրելի՛ վիրահայեր, եղբայրական վրացի ժողովուրդ.

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ձեզ եւ ձեր ընտանիքներին մաղթելով առողջություն, արելաշատություն եւ նորանոր հաջողություններ:

Մի քանի օրից մենք իրաժեշտ կտանք 2017 թվականին, թվական, որը լի էր բազմաբնույթ իրադարձություններով, որից ամմասն չմնացին նաեւ հայ-վրացական հարաբերությունները: Այս տարի մենք տոնեցինք հայ-վրացական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակը: Արդեն քառորդ դար է մեր ժողովուրդները՝ որպես անկախ եւ սուվերեն պետությունների քաղաքացիներ, հարաբերվում են միմյանց հետ, արդեն քառորդ դար է մեր պետությունները ավելի են խորացնում հայ-վրացական եղբայրական հարաբերությունները:

Թող 2018 թվականն այդ առումով լինի բեղմնավոր եւ հաջող տարի, տարի, որի ընթացքում կգրանցվեն անմասխաղեպ հաջողություններ:

Նախատոնական այս օրերին շատ խորհրդանշական էր Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի Վրաստան կատարած այցը, որը, վստահությամբ պետք է նշել, է՛լ ավելի ամրացրեց մեր երկկողմ հարաբերությունները եւ



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ԱՄԱՆՈՐՅԱ ԲԱՐԵՏԱՂՈՋԱՆՔՆԵՐ



«Վրաստան» թերթի խմբագրությանը.
Թանկագին բարեկամներ, շնորհավորում եմ Քրիստոսի Ծննդյան եւ Նոր՝ 2018 թվականի առթիվ: Սա տոն է, որը միշտ ավանդաբար դիմավորում ենք նոր ցանկություններով, հույսերով եւ սպասումներով:

Եթե հակիրճ գնահատենք անցած տարին, ապա այն հարուստ էր բազմաբնույթ իրադարձություններով ու նորությամբ: Անցած տարի կարողացանք սկսել եւ իրականացնել ենթակառուցման մասշտաբային շատ նախագծեր, նշանակալի քայլեր կատարվեցին բնակչության սոցիալական

«Վրաստան» թերթի խմբագիր, պարոն Վան Բայրուբյանին:

Թանկագին բարեկամ, ի սրտե շնորհավորում եմ Ձեզ, ձեր գլխավորած «Վրաստան» թերթի կուլեկտիվի Ամանորն եւ Սուրբ Ծնունդը:

Օգտվելով առիթից իմ ամանորյա մաղթանքներն են հղում Քվեմո Քարթլիի բազմազգ բնակչությանը: Յուրաքանչյուր նոր տարին առնչվում է լավագույն ապագայի եւ նոր սպասումների հետ: Մեր իշխանությունը հնարավորինս անում է, որ երկրի բնակչության երազանքները մարմնավորվեն, յուրաքանչյուր ընտանիք ապրի բարեկեցիկ կյանքով:

Իրականացված նախագծերի տեսանկյունից, անցած, 2017 թվականը նշանակալից էր մեր երկ-

րն կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ, կարգավորվեցին ճանապարհային ենթակառուցը, ջրամատակարարման համակարգերը, դպրոցները, մանկապարտեզները, մշակութային եւ արվեստի կենտրոնները: Չգտում ենք աստիճանաբար կարգավորել տարվա ընթացքում ծագող հիմնախնդիրները, եւ դա առաջիկայում եւս կշարունակենք:

Հավատում եմ, որ Նոր՝ 2018 թվականը կդառնա նորացման, առաջընթացի եւ հաջողությունների տարի: Երկրամասային վարչության եւ անձամբ իմ անունից կրկին շնորհավորում եմ ձեզ նոր տարվա առթիվ: Թող այն երջանկություն, խաղաղություն եւ բարեկեցություն բերի ձեզանից յուրաքանչյուրի ընտանիքին ու համայն Վրաստանին:

ՎԱԿԻ ԲԱՐՏԵԳՅԱՆԸ

Սամցխե-Չախախթեթի երկրամասի պետական լիազոր-նահանգապետ

րամասի համար: Ծրագրված ու կատարված նախագծերը նշանակալիորեն բարելավեցին տարածաշրջանի բնակչության սոցիալ-կենցաղային պայմանները: Սակայն առաջիկայում անելիքները շատ են եւ հուսով եմ, որ 2018-ն էլ կլինի արգասաբեր:



Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդը:

ԳՐԻԳՈՆ ՆԵՍՍԻՍՅԱՆԸ

Քվեմո Քարթլիի երկրամասի պետական լիազոր-նահանգապետ



ԻՍ ԲԱՐԻ՛-ԲԱՐԻ ԶՍԵՆ ՊԱՊ...

Հիմա շատ կուզեմայի, որ Ձմեռ պապը լսեր իմ խնդրանքը... Մի անգամ գոնե... Լսեր ու կատարեր... Չգիտեմ կլսի՞, թե՞ չէ, բայց խնդրելու եմ... Խնդրելու եմ ոչ թե գաղտնի, այլ բարձրաձայն...

Իմ սիրելի Ձմեռ պապ, բարով եկար: Խնդրում եմ, շուտ գարուն բեր բոլորիս համար, նաեւ ծյուն բեր մանուկների համար, որ ուրախանան: Հետո շատ-շատ արեւ բեր, որ արեւից ծերունիները տաքանան: Թող այս գալիք տարում մեր հարսները հանճարներ ծնեն մեր ազգի համար, որ ազգս ավելի հանճարանա, անհատներ ծնվեն իմ ազգի համար... Միաբանություն բեր, Ձմեռ պապ: Անտաղանդին տաղանդ տուր, Ձմեռ պապ: Այնպես արա, որ եկեղեցուն մոռ վառելու համար հերթ լինի, հայկական դպրոց գնալու համար՝ դասարանում տեղ չլինի, ներկայացման գնալու համար տոնա չլինի, որ մեր հայկական թերթ ընթերցելու տեղ չլինի, որ վիրահայերս բաժան-բաժան չլինենք:

Իմ Ձմեռ պապ, իմ բարի՛-բարի Ձմեռ պապ, այնպես արա, որ բոլորը քեզ նման լինեն... Իմ բարի՛-բարի Ձմեռ պապ:

ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆ-ՊՈՒՐՅԱՆ

Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար

ՆՈՐ ՏԱՐԻՆ՝ ՆՈՐ ՀՈՒՅՄԵՐՈՎ

Հայտնի է, որ աշխատանքը գնահատվում է վերջնական արդյունքով: Կրթության բնագավառում կատարվող արժանատի վերափոխումները ցույց են տալիս, որ որակական արդյունքի համար հարկավոր է ջանադիր աշխատանք:

Ուստի, մեր առաջընթացը, որը խարսխարվում է անցյալի ձեռքբերումների վրա, հարկավոր է ամրապնդել ու դրանց հենքի վրա կառուցել նորերը: Կրթության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը մեզ ուղեկցում է ամբողջ կյանքում, եւ այսօր, երբ մենք կանգնած ենք հմի ու նորի սահմանագծում, դարձյալ արածն անփոփոխելու ու ապագայի մասին խորհելու առիթ է

ստեղծվում:

2017 թվականին Ախալքալաքի մուկիցիսակոստի ուներ 5 ոսկե եւ 10 արծաթե մեդալակիր: Է՛լ ավելի է բարելավվել դպրոցների նյութատեխնիկական բազան ինչպես կրթության նախարարության կողմից, այնպես էլ՝ դպրոցների սեփական միջոցներով:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)



«Վրաստան» թերթի խմբագրությանը.
Սիրելի՛ բարեկամներ, այսօր՝ նոր տարվա մեկնարկին, ի սրտե շնորհավորում եմ ձեզ եւ ձեր ընտանիքներին Ամանորի եւ Սուրբ Ծննդի առթիվ:

Օգտվելով առիթից՝ իմ բարեմաղթանքներն են հղում իմ սիրելի ախալքալաքցիներին: Բարեկամներ, թող 2018-ը ձեզանից յուրաքանչյուրի համար դառնա երջանկության, առաջընթացի եւ ձեռքբերումների տարի: Հուսով եմ նաեւ, որ ձեզանից յուրաքանչյուրն իր ավանդը կներդնի մեր շրջանի բարգավաճմանը, զարգացմանն ու առաջընթացին մայատակաուղղված մեր հավակնոտ ծրագրերի իրականացման գործին:

Շնորհավոր Նոր տարի ու Սուրբ Ծնունդ:

ՅՈՒՐԻ ՈՒՆԱՆՅԱՆ

Ախալքալաքի քաղաքապետ



«Վրաստան» թերթի խմբագրությանը.

Թանկագին բարեկամներ, ուրախ եմ, որ ինձ պատիվ է վիճակվել բոլոր նիմոծինդացիների անունից շնորհավորել ձեր Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը, մաղթել հաջողություններ, երջանկություն ձեր ընտանիքներին, երկարակեցություն մեր սիրելի «Վրաստանին»:

Օգտվելով առիթից՝ իմ ամանորյա եւ Սուրբ Ծննդյան շնորհավորանքներն են հղում սիրելի նիմոծինդացիներին: Թանկագին բարեկամներ, եկեք համատեղ ջանքերով 2018 թվականը նշանավորենք՝ որպես մեր շրջանի համար բեկունցային տարի թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական, թե՛ բնակեցնաղային առումով: Իրականացնենք այն բոլոր ծրագրերն ու նախագծերը, որոնց մասին բազմիցս խոսել ենք:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ, թանկագին բարեկամներ:

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ

Նիմոծինդայի քաղաքապետ



ԱՍՐԱՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

Սուրբ Քրիստոսի անվան մանկապարտեզի ղեկավար

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐ

ՊԱՐՈՆ ՎԱՆ ԲԱՅՐՈՒԲՅԱՆԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայրենիք-Սփյուռք գործակցությունը՝ ի նպաստ հայկական երկու պետությունների աննախընթաց վերելքի, հայրենադարձության խթանման եւ հայության երազանքների կատարման:

Թող Նոր տարին խաղաղություն, բարգավաճում բերի աշխարհի բոլոր անկյուններում ապ-

րող մեր հայրենակիցներին եւ առավել համախմբի բոլորին Հայոց պետության շուրջ:

Կրկին շնորհավորելով Ձեզ՝ մաղթում եմ, որ 2018 թվականը լինի առողջության, անձնական հաջողությունների եւ ձեռքբերումների տարի:

Հարգանքով՝

ՀՐԱՆՈՒԷ ՀԱԿՈՐՅԱՆ

Հայաստանի սփյուռքի նախարար

Սիրելի՛ վիրահայեր, եղբայրական վրացի ժողովուրդ.

(Սկիզբը՝ 1-ին էջում)

այդ ուղղությամբ նոր հորիզոններ ուրվագծեց: Նոր տարին ընտանեկան տոն է, եւ քանի որ ընտանիք հասկացողությունը հայ եւ վրացի ժողովուրդների համար ունի առանցքային նշանակություն, այդ իսկ պատճառով, Նոր տարին եւս առանձնահատուկ վերաբերմունքի է արժանանում մեր ժողովուրդների կողմից:

Ամանորյա սեղանների շուրջ մենք կխմենք տարբեր կենացներ, տարբեր ցանկություններ կառաքենք առ Աստված: Եկեք այս տարի այդ

ցանկությունների մեջ ներառենք նաեւ հայ-վրացական դարավոր բարեկամության ավելի ամրապնդման շատ կարեւոր ցանկությունը:

Սիրելի՛ վիրահայեր, տա՛ւ Աստված, որ Նոր տարուն իրականություն դառնան ձեր բոլոր բարի ցանկությունները, հույսերն ու սպասումները: Տարեմուտի այս օրերին ցանկանում եմ բոլորի օջախներին սեր եւ ջերմություն, իսկ մեր երկրներին՝ խաղաղություն եւ բարեկեցություն: Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

ՄԵՐ ՆԱԻՐԻ ԶՍԵՆ ՊԱՊ ԱՄԵՆԱՄՐԱԳՎՅԱՆ Է

Սովորաբար, նվերներ տալիս ու առնում ենք տարեսկզբին: Սա Ամանորի ամենասիրված ու սպասված պահն է, որ նույն կերպ է ընկալվում թե՛ փոքրիկների եւ թե՛ մեծահասակների կողմից: Գիտենք, որ Ձմեռ պապ չկա, բայց մանկորեն հավատում ենք... Ու, երեւի, այդ համառ հավատի աղյուծում, ստանում այն, ինչ օրինակ, մենք՝ Շահունյանի թիվ 1 հանրային դպրոցը: Այս տարի մեր Ձմեռ պապը սպասվածից էլ շուտ եկավ, 2017-ի տարեվերջին: Եկավ Վաչե Նաիրյան անունով ու հարազատ դպրոցի ամենափոքրիկներին նվիրեց

նոր ու հարմարավետ նստարաններ: Նաիրին մեր դպրոցի արդեն երկար տարիների շրջանավարտ է ու ավանդապաշտ ընտանիքի հայր, ագիդ քաղաքացի: Պատեհ առիթ է Նաիրին շնորհակալություն հայտնել եւ շնորհավորել: Շնորհավոր նաեւ բոլորիս ու բոլորիդ Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Թող հավատն առ այն, որ Ձմեռ պապն անպայման իրականացնելու է երազանքը, երբեք չմարի՛ շնորհիվ բարի ու նվիրյալ մարդկանց:

ԱՐՏՈՒԷ ՈՒՊՈՒՅԱՆ

Սամնուլիի մունիցիպալիտետի Շահունյանի թիվ 1 հանրային դպրոցի տնօրեն

Թանկագին բարեկամներ.

Նոր տարվա եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ իմ բարեմաղթանքներն են հղում Ձեզ:

Բարեկամներ, հարազատներ, գործընկերներ, թող 2018-ը ձեզ եւ ձեր ընտանիքներին բերի խաղաղություն, երջանկություն եւ բազմաթիվ հաջողություններ: Թող լինի բոլորի համար առաջընթացի, նորանոր ձեռքբերումների եւ խաղաղության տարի: Այն, ինչ թերացել ենք անել 2017 թվականին եւ անհաջողություններ ունեցել, թող մնա անցյալում, գալիք տարին լինի միայն վերելքի եւ հաջողությունների տարի:

Օգտվելով առիթից՝ ուզում եմ շնորհավորել կրթական համակարգի բոլոր ներկայացուցիչներին: Մաղթում եմ նրանց եռանդ, տոկունություն, առողջություն եւ, անենալարեւորը՝ խաղաղություն:

Կրկին անգամ ուզում եմ շնորհավորել բոլորիս գալիք տարվա առիթով ձեզ՝ հարգելի՛ «Վրաստանցիներ», ի՛մ սիրելի աղքատիքներ, բոլորիս մաղթում քաջառողջություն, երկարակեցություն, նորանոր հաջողություններ:

ՎԻՈՒԵՍԱ ՍՈՒԲԻԱՍՅԱՆ
Սամնուլիի մունիցիպալիտետի Աղքատի գյուղի հանրային դպրոցի փոխտնօրեն





Շաբաթից շաբաթ. Փասսեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՉՈՐՍ ԿԵՏԻՑ ԲԱՂԱՅԱՍԾ ԾՐԱԳԻՐԸ ԵՐԿԻՐԸ ԿԲԱՐՉՐԱՅՆԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ»

Դեկտեմբերի 27-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց կառավարության 2017 թվականի եզրափակիչ նիստը:


Նիստում, հանրագումարելով անցնող տարվա արդյունքները, վարչապետը հայտարարեց, որ ներկայումս իրականացվող չորս կետից բաղկացած ծրագիրը հաջորդ տարի կունենա զարգացման առավել բարձր տեմպեր:

- Չորս կետից բաղկացած ծրագիրը, որը հանդնորդի կամ քայլերի միասնություն է, եւ նախատեսված է, որպեսզի առավելագույնս սեղծ ժամկետներում փոխվի մեր բնակչության կենսամակարդակը, մնում է մեր կողմից իրականացվելիք ծրագրերի բաղկացուցիչ մասը: 2017 թվականի ընթացքում, բնականաբար, այդ ծրագրերը առաջնային էր մեր կառավարության համար եւ, համոզված եմ, որ այդ ծրագրի շնորհիվ մենք կկարողանանք երկրի զարգացման մակարդակը բարձրացնել, ինչը կշարունակվի հաջորդ երեք տարիների ընթացքում: - հայտարարեց վարչապետը եւ հավելեց: - հուսով եմ, որ հաջորդ տարի երկրի տնտեսական զարգացումը կընթանա է՛լ ավելի դինամիկ: Մեր երկիրը հաջողությամբ հաղթահարեց 2014

թվականից հետո արտաքին տնտեսական ցնցումը, եւ, կարծում եմ, որ հաջորդ տարի տնտեսական աճի տեսանկյունից զարգացումը կլինի առավել դինամիկ: 2017 թվականի ինն ամիսների ընթացքում ստեղծվել է 38 հազար աշխատատեղ, ինչը կարելի էր նշանակություն ունի քաղաքացիների համար: Չորս կետից բաղկացած ծրագրի գլխավոր բաղկացուցիչ մաս հանդիսացող շահութահարկի բարեփոխումը բիզնեսին հնարավորություն տվեց տնտեսել ավելի քան 500 միլիոն լարի, ինչը ներդրման սկզբունքով ներդրվեց տնտեսության տարբեր ոլորտներում:

Նրա խոսքով, կառավարության սկսած բարեփոխումները լայն պաշտպանության են արժանացել Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի կողմից:

Անդրադառնալով 2017 թվականին իրականացված գործունեության եւ առաջիկա ծրագրերին՝ Վրաստանի վարչապետը նշեց, որ 2017-2020 թվականներին



ՍԿՍՎԵԼ Ե ԱՆԱԿԼԻԱՅԻ ԽՈՐՀՐՅԱ ՆԱՎԱՅԱՆՊՏՏԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի սեւծովյան Անակլիա քաղաքում սկսվել է խորհրդա նավահանգստի շինարարությունը:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքով, դա ամենամասշտաբային նախագիծն է 21-րդ դարի Վրաստանում:

- Այդ նավահանգիստը հնարավորություն կտա մեր երկրին ընդունել ամենամեծ նավերը եւ, ելնելով դրանից, համաքայլ ընթացալ տարածաշրջանում կոնտեյներային եւ այլ փոխադրումների ածող դինամիկայի հետ: - ասաց վարչապետը:

Սպասվում է, որ Անակլիայի նավահանգիստը կսկսի աշխատել 2021 թվականին:

Javelin ՀԱՎԱՍԱՆԿԱՅԻՆ ՀՐԹԻՈՒՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻՆ

ԱՄՆ Պետական դեսպարտամենտը հավանություն է տվել Վրաստանին 75 միլիոն դոլար գումարի Javelin հակատանկային հրթիռային համալիրների եւ արձակման կայանքների վաճառքներին, մատակարարումների վերաբերյալ վերջնական որոշումը կընդունի ԱՄՆ Կոնգրեսը:

Վրաստանն ավելի վաղ խնդրել էր իրեն տրամադրել 410 Javelin հակատանկային հրթիռային համալիր եւ 72 կայանք, պարտավորագրող նաեւ նախատեսում է առաքում, ուսուցում եւ այլ սպասարկում: Ինչպես նշում են Պենտագոնում, Javelin համակարգը կմեծացնի պաշտպանության բնագավառում Վրաստանի հնարավորությունները:

ՆԵՐՈՒՄ 187 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Նոր տարվա առթիվ, Վրաստանի նախագահը ներում է շնորհել 187 բանտարկյալի:

Ինչպես տեղեկացրել է ներման հանձնաժողովի նախագահ Ջվիաղ Զորիծեն, արգելավայրից այսօր իսկ ազատ կարձակվեն 123 բանտարկյալ, իսկ 64-ի պատժաժամկետը նվազեցվում է:

187 բանտարկյալից ներման արժանացածների թվում 12-ը կանայք են, 3-ը՝ անչափահաս:

Ինչպես հայտարարեց Ջվիաղ Զորիծեն, հանձնաժողովը, ընդհանուր առմամբ, քննարկել է 1182 բանտարկյալի գործ:

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ՋՐԻ ՍԱԿԱՐԿՆԵՐԸ ԹԱՆԿԱՑԵԼ ԵՆ

Դեկտեմբերի 27-ին Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովի հերթական նիստում որոշում է ընդունվել, ըստ որի, ԹԵԼԱՍ-ի արճընտների համար էլեկտրաէներգիայի սակագինն ավելացվում է 1,325 թեթրիով, ինչը ՀԱԳ-ի հետ միասին սպառողների համար կկազմի 1,56 թեթրի՝ 1 կիլովատտ ժամի համար:

ԹԵԼԱՍ-ի արճընտների ամսական մինչեւ 101 կիլովատտ ժամ էլեկտրաէներգիա սպառողների համար, ներկայիս 12,98 թեթրիի դիմաց, նոր սակագինը կկազմի 14,54 թեթրի, ամսական 101-ից մինչեւ 301 կիլովատտ ժամ էլեկտրաէներգիա ծախսող սպառողների համար, ներկայիս 16,992 թեթրիի դիմաց, նոր սակագինը կկազմի 18,56 թեթրի, իսկ 301 եւ ավելի կիլովատտ ժամ էլեկտրաէներգիա սպառողների համար, գործող 21,476 թեթրիի դիմաց, 1 կիլովատտ ժամի սակագինը կկազմի 23,04 թեթրի:

Թանկացվում է նաեւ էներգոարձուրջայի արճընտների սակագինը: Այստեղ 1 կիլովատտ ժամի հաշվով այն ավելացվում է 1,28 թեթրիով:

Էներգոարձուրջայի արճընտ տարածաշրջանների բնակիչների համար մինչեւ 101 կիլովատտ ժամ սպառողների համար, գործող 12,954 թեթրիի դիմաց, սակագինը հասցվել է 14,23666 թեթրիի:

101-ից մինչեւ 301 կիլովատտ ժամ սպառողների համար, գործող 16,931-ի դիմաց, նոր սակագինը սահմանվել է 18,21366 թեթրիի չափով, իսկ 301 եւ ավելի կիլովատտ ժամ սպառողների համար 21,450-ի դիմաց, 1 կիլովատտ ժամի արժեքը հասցվել է 22,73266 թեթրիի:

Ավելացվել է նաեւ ջրի սակագինը: Հաշվիչներով հաշվարկմանը Թբիլիսիի բնակչի համար մեկ խորանարդ մետր ջրի սակագինն ավելացվել է 6 թեթրիով եւ, 0,266-ի փոխարեն, կազմել 0,329 թեթրի: Բնակչության մեկ շնչի հաշվով 3,147-ի դիմաց կազմել է 3,89 լարի:

Նշենք, որ վերոնշյալ ավելացված սակագների հաշվարկումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ՀԱԿԱՐԱՐԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՆԿԻՍԻ ԿԻՐՃՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին Վրաստանի Պանկիսի կիրճի Դուխի գյուղում անցկացվեց ռուսիկանական գործողություն՝ մինչեւ 60 հատուկ ջրկատայինների մասնակցությամբ:

Չերբակավել է Դուխիի երկու բնակիչ՝ Թեմիշլան եւ Ռուսլան Մաչալիկաշվիլիները, ինչպես նաեւ այդ գյուղից սերված Օմալո Բադո Զոպանաշվիլին, որոնք մեղադրվում են նոյեմբերին Թբիլիսիում վերացված ահաբեկիչ Ամեդո Զաթաբիի հետ կապեր ունենալու մեջ:

Տարածված տեղեկատվության համաձայն, Զոպանաշվիլին են նոյեմբերին Թբիլիսիում վերացված ահաբեկիչ Ամեդո Զաթաբիի հետ կապեր ունենալու մեջ:

Տարածված տեղեկատվության համաձայն, Զոպանաշվիլին են նոյեմբերին Թբիլիսիում վերացված ահաբեկիչ Ամեդո Զաթաբիի հետ կապեր ունենալու մեջ:

վիլին օգնել է Չաթաբեին ու նրա խմբին՝ բնակարան վարձել Թբիլիսիում: Առայժմ Վրաստանի իրավապահ մարմինները տեղեկություն չեն հրապարակել Պանկիսի կիրճում հատուկ գործողություն անցկացնելու մասին: Թբիլիսիում հատուկ գործողության ընթացքում, որն ավելի քան քսան

ժամ շարունակվել է նոյեմբերի 21-ից մինչեւ 22-ը, բազմաթիվ շեղման բնակարաններից մեկում ոչնչացվել է երեք ահաբեկիչ, իսկ մեկը ձերբակալվել է մինչեւ մարտ ամսվա սկիզբը: Ձինված բախման հետեւանքով, սպանվել է մեկ, վիրավորվել՝ մի քանի հատուկ ջրկատային:

ՇՈՒՐՋ 250 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ ԼՔԵԼ Ե ՀԱՅՐԵՆԻՔԸ

Միգրացիայի միջազգային օրվան նվիրված միջոցառման առթիվ ՄԱԿ-ի զեկուցագրում նշված է, որ վերջին 17 տարիների ընթացքում իր ծննդավայրից հեռացել եւ այլ երկրներում բնակություն է հաստատել շուրջ 258 միլիոն մարդ: Այդ ցուցանիշը 49 տոկոսով գերազանցում է 2000 թվականի ցուցանիշը:

Միգրացիայի միջազգային օրվա կապակցությամբ իրատարակած զեկուցագրում նշված է, որ միջազգային միգրանտ դարձած համաշխարհային բնակչության բաժինը 2020 թվականի 2,8 տոկոսի դիմաց, 2017 թվականին կազմել է 3,4 տոկոս:

Միաժամանակ, ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական հարցերով զեկուցագրում նշված է, որ եկամտաւոր բարձր մակարդակով երկրներում ապրող մարդկանց թիվը 2000 թվականի 9,6-ի դիմաց, 2017 թվականին հասել է 14 տոկոսի: Այդ երկրները ողջ աշխարհից ընդունել են միջազգային միգրանտների հոսքի 64 տոկոսը, ինչը կազմում է 165 միլիոն մարդ: 2017 թվականին միգրանտների երկու երրորդը բնակություն է հաստատել 20 երկրում: Բոլորից շատ միգրանտներ, 49,8 միլիոն մարդ կամ ընդհանուր թվի 19 տոկոսը, բնակություն են հաստատել ԱՄՆ-ում: Երկրորդ, երրորդ եւ չորրորդ տեղերը կիսում են Սաուդյան Արաբիան, Գերմանիան եւ Ռուսաստանը, որոնցից յուրաքանչյուրում բնակություն է հաստատել 22-ական

միլիոն միգրանտ: 9 միլիոն միգրանտով հինգերորդ տեղը զբաղեցնում է Մեծ Բրիտանիան: ՄԱԿ-ի կողմից հրապարակած զեկուցագրի համաձայն, Վրաստանում բնակություն է հաստատել 78 հազար միգրանտ, որը կազմում է երկրի բնակչության 2 տոկոսը: Այդ ցուցանիշը ամենացածրն է Անդրկովկասյան տարածաշրջանում եւ Արեւելյան Եվրոպայում: Չեկուցագրի համաձայն, այդ հար-

ցում Վրաստանում հաստատված է կայունություն վերջին 17 տարվա ընթացքում միգրանտների թիվը ավելացել է ընդամենը 2 հազարով: Վրաստանում բնակություն հաստատած միգրանտների միջին տարիքը հասնում է 40-ի, ընդ որում վերաբնակեցվածների կեսից ավելին (56 տոկոսը կազմում են կանայք):

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, այսօրվա դրությամբ, Հայաստանում բնակվում է 191 հազար միգրանտ: Այդ թիվը կազմում է երկրի ընդհանուր բնակչության 6,5 տոկոսը: Միաժամանակ, միգրանտների շարքում ավելի շատ կանայք կան, քան տղամարդիկ: Չեկուցագրի տվյալներով, դարասկզբի համեմատ, իրավիճակը զգալիորեն փոխվել է: 2000թ. հաշվետվության համաձայն, Հայաստանում միգրանտների թիվը կազմել է 658 հազար (բնակչության 21 տոկոսը):

Սակայն, ՄԱԿ հաշվետվությունը հաշվի չի առնում միգրանտների ազգությունը: Այսպիսով, Հայաստանում բնակվող Ռուսաստանի քաղաքացի հայերը համարվում են միգրանտներ:

ՆՈՐ ԱԶԳԱԿ՝ ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ԱՌԿԱ ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի և Հայաստանի նախագահները երկուստեք գոհունակությամբ արձանագրեցին ընթացիկ տարում երկու երկրների միջև տարբեր ոլորտներում զարգացող համագործակցությունը՝ միաժամանակ նկատելով, որ փոխգործակցության ներուժը շատ ավելին է, և անհրաժեշտ է այն ամբողջությամբ իրացնելու ուղղությամբ երկուստեք հետևողականորեն շարունակել աշխատանքը:

Ընդլայնված կազմով հանդիպման ժամանակ, պատվիրակությունների անդամները ներկայացրին յուրաքանչյուրն իր ոլորտում համագործակցությունը, իրականացվող համատեղ ծրագրերի ընթացքը, ձեռքբերումներն ու խնդիրները և դրանց լուծման ու փոխգործակցության խրաջան ուղղությամբ հանձնարարություններ ստացան նախագահներից:

Բանակցությունների արդյունքները նախագահներ Գիորգի Մարգվելաշվիլին և Սերժ Սարգսյանին հանձնարեց փոխադարձ բաժակաճառերով:

Նրանք հանրագումարեցին զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների առջև հայտարարություններով: Երեկոյան, ի պատիվ պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Սերժ Սարգսյանի և տիկին Ռիտա Սարգսյանի, Գիորգի Մարգվելաշվիլու և նրա տիկնոջ՝ Մակա Չիչուայի ամուսինաց տրվեց պաշտոնական ընթրիք, որտեղ Գիորգի Մարգվելաշվիլին և Սերժ Սարգսյանը հանդես եկան փոխադարձ բաժակաճառերով:

ԸՆԴՊԾՎԵՑ ՄԻՋՆՈՐՅՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի նախագահի թիվ 1 կատարած պաշտոնական այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի և Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը:



Հանդիպմանը Իրակլի Կոբախիձեն ողջունեց Հայաստանի նախագահի գլխավորած պատվիրակությանը և համոզված է հայտնեց, որ Վրաստանի խորհրդարանը մեծապես կարեւորում է և պատրաստ է Հայաստանի հետ շարունակել հետևողականորեն զարգացնել սերտ համագործակցությունը՝ իր ներդրումն ունենալով երկու երկրների միջև կապերի խորացման գործում: Իրակլի Կոբախիձեն դրվատանքով խոսեց Վրաստանի խորհրդարանում հայ պատգամավորների գործունեության մասին՝ ընդգծելով, որ նրանք իրենց ներդրումն են ունենում ոչ միայն խորհրդարանի աշխատանքում, այլ նաեւ հայ-վրացական հարաբերությունների խորացման գործում:

Իր հերթին, Հայաստանի նախագահը խորհրդարանական կառավարում ունեցող Վրաստանի հետ հարաբերությունների զարգացումը կարեւորեց նաեւ Հայաստանում սահմանադրական փոփոխություններից հետո կառավարման նոր համակարգի անցման տեսանկյունից:

Հանդիպմանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի հայագծի պատգամավորներ Յենգել Սկոլյանը, Ռուսլան Պոդոյանը և Սամվել Մանուկյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին Վրաստանի պատրիարքարանում տեղի ունեցավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հանդիպումը պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի և նրա գլխավորած պատվիրակության անդամների հետ: Հանդիպմանը Սերժ Սարգսյանն իր և ողջ հայ ժողովրդի անունից շնորհավորեց Իլիա Երկրորդին վրաց ժողովրդի համար կարեւոր հոբելյանի Կաթողիկոս-Պատրիարքի գահակալման 40-ամյակի առթիվ: Երկուստեք կարեւորեցին Վրաց Ուղղափառ և Հայ Առաքելական եկեղեցիների դերը վրաց-հայկական բարիդրացիական հարաբերությունների զարգացման գործում:



Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը Հայաստանի նախագահին խնդրեց իր ջերմ ողջույններն ու բարեմաղաքները փոխանցել Ամենայն Հայոց կաթողիկոսին:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՆԱԽԱՆՇԵՑԻՆ ՍՏԱՑԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Դեկտեմբերի 26-ին Թբիլիսիում, Հայաստանի նախագահի պաշտոնական այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի արտաքին գործերի նախարար Սիլվեսի Ջանելիձեի և Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավար Էդվարդ Նալբանդյանի, Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իգորիայի և Հայաստանի պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հետ հանդիպումները:

Նախարարներն ամփոփեցին Հայաստանի նախագահի՝ Վրաստան պաշտոնական այցի արդյունքները, Թբիլիսիում կայացած հանդիպումներին ձեռքբերված պայմանավորվածություններից բխող երկու երկրների համապատասխան գերատեսչություններին տրված հանձնարարականները և նախանշեցին դրանց իրականացման ուղիները:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՐՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԷՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցի երկրորդ օրը՝ դեկտեմբերի 26-ին, Վրաստանի պետական գրասենյակում տեղի ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու և Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը: Հանդիպմանը Վրաստանի վարչապետն ու Հայաստանի նախագահը գոհունակությամբ փաստեցին երկու բարեկամ երկրների միջև դիմամիկ զարգացող ու տարեցտարի ամրապնդվող հարաբերությունները՝ այդ համատեքստում նշելով նաեւ առեւտրատնտեսական ոլորտում անցնող տարում վրաց-հայկական համագործակցության արդյունքում արձանագրված նկատելի առաջընթացը, ակտիվ փոխգործակցությունը գրասաշրջության, էներգետիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների և մի շարք այլ բնագավառներում:



Վրաստանի վարչապետը շնորհավորեց Սերժ Սարգսյանին և ամբողջ հայ ժողովրդին գալիք տոների առթիվ, մաղթեց Հայաստանին խաղաղություն ու կայուն զարգացում: Իր հերթին, Հայաստանի նախագահը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար և ընդգծեց, որ հայ ու վրացի ժողովուրդների անցած բազմադարյա ուղին պարտավորեցնում է երկու երկրների իշխանություններին իրենց վստահված ժամանակահատվածում ազնվորեն ծառայելու միտքով:

Վրացի ղեկավարը նշեց, որ Վրաստանը կառուցված է լիակատար խաղաղության վրա, որը հնարավորություն է տալիս երկու կողմերի միջև հարստացնելու և բարեկամությունը զարգացնելու ուղիները: Գիորգի Կվիրիկաշվիլու պաշտոնական այցը Հայաստան: *****

ՌԱԶՄԱՆՈՒՄ ԿԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ



Դեկտեմբերի 26-ի առավոտյան, պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի և պաշտոնական պատվիրակության անդամների հետ, այցելեց Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցի: Տաճարում Հայաստանի նախագահին և նրան ուղեկցող անձանց ողջունեցին Վրաստանի ժողովուրդը և կազմեցին եպիսկոպոս Սիրախանյանը, համայնքի ներկայացուցիչները: Երկուշաբթի Սերժ Սարգսյանը՝ տիկնոջ և պաշտոնական պատվիրակության անդամների ուղեկցությամբ, եղավ նաեւ Թբիլիսի «Հովիթուհանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում, որտեղ ծանոթացավ կենտրոնում վերանորոգումից հետո իրականացված աշխատանքներին ու շփվեց հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Սերժ Սարգսյանը դիտեց նաեւ կենտրոնի մասին պատմող ֆիլմը, որից հետո նրան ուղեկցեցին հարավային պատշգամբ, որտեղ սիրում էր հանգստանալ և հյուրեր ընդունել Սեժն Թունանյանը: Գիտամշակութային կենտրոնում հյուրերին ցուցադրեցին մեծամասնությամբ ղեկավարվող, հայտնի, համարազանց ժողովրդային, հայտնաբերված առարկաները, համարազանց ծառայողական ծրագրերը:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՔ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ԶՈՐԿԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Հայաստանի պաշտոնական պատվիրակության անդամներն այցելեցին Թբիլիսիի Հերոսների հրապարակում գտնվող Վրաստանի ազատության և անկախության, տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշակոթող և հարգանքի տուրք մատուցեցին հայրենիքի համար զոհվածների հիշատակին:

Սերժ Սարգսյանը գլխավորած պատվիրակությունը վերադարձավ Երեւան: Սերժ Սարգսյանն և տիկին Ռիտա Սարգսյանին օդանավակայանում ճանապարհեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: